ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

03 ՄԱՐՏԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Միեր Ալավերդյանը, Արմենուհի Ծատուրյանը, Գնել Ղազարյանը, Վարդուհի Միրզոյանը, Սեվակ Սամվելյանը, Նարինե Սմբատյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հուսիկ Սահակյանը

Նիստը արձանագրում էր՝ Գևորգ Սիմոնյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 03-Ը ՄԱՐՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արենի համայնքի ավագանու 03-ը մարտի 2025 թվականի թիվ 3 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 03-ը մարտի 2025 թվականի թիվ 3 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

հայտարարված դրամաշնորհային մրցույթին Արենի համայնքի մասնակցությանը համաձայնություն տալու մասին:

17. Արենի համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակելու մասին:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 024-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը, ՀՀ կառավարության 17.06.2021թվականի թիվ 987-Ն որոշման հավելվածի 1-ին մասի 12-րդ և 14-րդ կետերը, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0,01295հա (ծածկագիրը՝ 10-006-0350-, հողատեսքը՝ այլ հողատես) գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության՝ գինու գործարանին կից կառույցները օրինականացնելու նպատակով:

2. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0,01957հա (ծածկագիրը՝ 10-006-0350-, հողատեսքը՝ այլ հողատես) գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության՝ գինու գործարանին կից կառույցները օրինականացնելու նպատակով:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 025-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջնով և հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 14-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետը, ՀՀ Կառավարության 29.12.2011 թվականի թիվ 1920-Ն որոշումը և ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ Համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 10.02.2025 թվականի թիվ 2/փ-59 և 19.02.2025թվականի թիվ 2/փ-65 դրական եզրակացությունները՝ որոշում եմ.

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Ավետիք Սիմոնյանի սեփականություն հանդիսացող 0,1 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝ վարելահող, կադաստրային ծածկագիրը՝ 10-008-0193-0004) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Վասակ Կարապետյանի սեփականություն հանդիսացող 0,0705 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝ վարելահող, կադաստրային ծածկագիրը՝ 10-008-0110-0027) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 026-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻՑ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 15 դեկտեմբերի 2017 թվականի «Արենի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց կարգը սահմանելու մասին» թիվ 55-Ն որոշումը և Արենի համայնքի «Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, նորածին երեխա ունեցող

ընտանիքներին, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման» հանձնաժողովի դրական եզրակացությունը՝

Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արենի համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 «Սոցիալական հատուկ արտոնություններ» տնտեսագիտական դասակարգման /4729/ այլ նպաստներ հոդվածից Արենի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին ցուցաբերել դրամական աջակցություն՝ _____ ՀՀ դրամ գումարի չափով:

2. Գումարները հատկացնել վերոնշյալ ընտանիքների անդամներից ներկայացված դիմումատուներին՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

3. Արենի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներից համայնքային ենթակայության մանկապարտեզ հաճախող երեխաների նկատմամբ սահմանել փոխհատուցման վճարների զեղչեր՝ համաձայն սույն որոշման հավելված 2-ի:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 027-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ <<ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊՈԼԻԿԼԻՆԿԱ>> ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ և ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ, ՉԻՎԱ, ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՄԿ-ՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հարգել ՀՀ Վայոց ձոր մարզի <<Եղեգնաձորի պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի տնօրենի գրությունը և տալ համաձայնություն Արենի համայնքի Ելփին, Չիվա, Ռինդ բնակավայրերի ԲՄԿ-ների էլեկտրաէներգիայի համայնքի կողմից անհատույց մատակարարմանը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 028-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՆԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՎԱԾԸ ՍԳՈ ՍՐԱՀԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ և ՍՐԱՀԻՆ ԱՌԱՆՁԻՆ ՄՈՒՏՔ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՄՈՒՏՔ և ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի մշակույթի տնից առանձնացված 72քմ հատվածը սգո սրահի կառուցման նպատակով հատկացնելուն:

2. Սրահին առանձին մուտք ապահովելու համար, նախամուտք և սանհանգույց կառուցելու նպատակով Արենի համայնքի 2025թվականի տարեկան բյուջեից հատկացնել 13 943 646 ՀՀ դրամ:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 029-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. ԱՐԵՆԻ-ԳՀԱՇՁԲ-01/24 ծածկագրով <<Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրում մարզադահլիճի հիմնանորոգման աշխատանքների>> շինարարական աշխատանքների ընթացքում իրականացված լրացուցիչ աշխատանքների համար <<Ավետիսյան շին մոնտաժ>> ՍՊԸ-ին հատկացնել 997 765 ՀՀ դրամ:

2. ԱՐԵՆԻ-ԳՀԱՇՁԲ-07/24 ծածկագրով <<Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրում 3-րդ փողոցի 1200գծմ, 5-րդ փողոցի 400գծմ., 12-րդ փողոցի 500գծմ., 12-րդ փողոցի 500գծմ. հատվածների լուսավորման համակարգերի կառուցման>>, <<Արենի համայնքի Չիվա բնակավայրում 2,5կմ փողոցային լուսավորման համակարգի կառուցման>> և <<Արենի համայնքի Չիվա բնակավայրում թվով 9 փողոցների լուսավորման համակարգերի կառուցման>> շինարարական աշխատանքների ընթացքում իրականացված լրացուցիչ աշխատանքների համար <<Աշոտ և Հայկ եղբայրներ>> ՍՊԸ-ին հատկացնել 3 116 904 ՀՀ դրամ:

3. ԱՐԵՆԻ-ԳՀԱՇՁԲ-07/24/1
ծածկագրով <<ԱրենիհամայնքիԵլփինբնակավայրիփողոցներիարտաքինլուսավորությանցանցիկառուցման>> շինարարական աշխատանքների ընթացքում իրականացված լրացուցիչ աշխատանքների համար <<Լուսի-Արեգ>> ՍՊԸ-ին հատկացնել 1 108 899 ՀՀ դրամ:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 030-Ա)*

ԼՍԵՑԻՆ

. ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արենի համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման պլանը՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 032-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել՝

1) ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքում հանրային հավաքների մասին հրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 033-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2024ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Արենի համայնքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն սույն որոշման 1-ից 17 հավելվածների:
2. Սույն որոշմանը կցվում է 2024թվականի ընթացքում Արենի համայնքում օտարված հողամասերի ցանկը և հողամասերի հատակագծերը՝ հավելված 19:
3. Հաստատել համայնքի սեփականություն հանդիսացող ոչ պիտանի գույքերի դուրս գրման փաստաթղթերը, համաձայն սույն որոշման 18-րդ հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 034-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.01.2025ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 002-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2025ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով

Արենի համայնքի ղեկավարի առաջարկությունը, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 15-ը հունվարի 2025 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարվող հետևյալ փոփոխությունները և վերաբաշխումները՝

1.Ոռոգում գործառնական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 04 դասի 5112 /շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածից պակասեցնել 8 250 000 ՀՀ դրամ և ուղղել՝

ա) Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում գործառնական դասակարգման 06 բաժնի 04 խմբի 01 դասի 5112/շենքերի և շինությունների շինարարություն / հոդվածին 4 250 000 ԴԴ ¹ñ³Ù,

բ) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 5129/Այլ մեքենաներ և սարքավորումներ/ հոդվածին 4 000 000 ՀՀ դրամ:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 035-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՉԻՆՎԱՆ ՄԱԿՆԻՇԻ ԹՎՈՎ 2 ՏՐԱԿՏՈՐՆԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Չինվան մակնիշի 2017թվականի արտադրության (նույնականացման համարը՝ 1112200045, գույնը՝ կանաչ, հաշվառման համարանիշը՝ 3794LS, շարժիչի համարը՝ 925885, թափքի համարը՝ 1112200045) տրակտորը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել գնահատված արժեքի 100%-ի չափով 1 802 000 ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Չինվան մակնիշի 2017թվականի արտադրության (նույնականացման համարը՝ 1112240050, գույնը՝ կանաչ, հաշվառման համարանիշը՝ 3793LS, թափքի համարը՝ 1112240050) տրակտորը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել գնահատված արժեքի 100%-ի չափով 1 802 000 ՀՀ դրամ:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 036-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 1,21656ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

(ԶԵԿ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը, ՀՀ կառավարության 17.06.2021թվականի թիվ 987-Ն որոշման հավելվածի 1-ին մասի 9-րդ կետը, Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 1,21656հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-025-0101-0446, հողատեսքը՝ վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության՝ բնակելի տներ կառուցելու նպատակով:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 037-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի և «Բյուջետային համակարգի մասի» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արենի համայնքի ղեկավարի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի՝

1) եկամտային մասով՝ 1022724900 ՀՀ դրամ կամ 101.0 %

սեփական եկամուտներ՝ 229 124 800 դրամ կամ 106,3 %

2) ծախսային մասով՝ 1116461100 ՀՀ դրամ կամ 94,1%

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 038-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ, ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԶԵՄՖԻՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի և 13-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթներով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն

1. Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող, Տեղական զարգացման հիմնադրամի ծրագրի շրջանակներում հայտարարված դրամաշնորհային մրցույթին Արենի համայնքի մասնակցությանը և ներկայացնել մինչը 4 դրամաշնորհային ծրագրային հայտ:

2. Դրամաշնորհային մրցույթին ներկայացվող յուրաքանչյուր ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Արենի համայնքի 2025 թ. բյուջեից կատարել համապատասխան համաներդրում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 039-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.11.2022ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 136-Լ ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ՄԱՍԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ և ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը, 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ավագանու 30.11.2022թվականի <<Արենի համայնքի ավագանու 17.11.2017թվականի թիվ 44-ն որոշման 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչելու և համամասնական ընտրակարգով ընտրված Արենի համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին>> թիվ 136-Լ որոշման 2-րդ մասը:

2. Ընդունել Արենի համայնքի ավագանու նոր կանոնակարգը՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 031-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***